

Բնության ընտրության մի քանի ձև:

Տարբերում են բնական ընտրության մի քանի ձև՝ *շարժական, կայունացնող, դիզոնպոզիվ* և *սեռական*:

Շարժական ընտրությունը տեղի է ունենում միջավայրի փոփոխվող պայմաններում: Նոր՝ փոփոխվող պայմաններում նախկին հատկանիշներ ունեցող առանձնյակներն աստիճանաբար վերանում



Նկ. 1. Շարժական ընտրություն:

են, իսկ տվյալ պայմանների համար օգտակար հատկանիշ ձեռք բերած առանձնյակները՝ վերապրում: 2. Դարվիճը տեսավ, որ Անգլիայի արդյունաբերական կենտրոններում աճող կեչիների բները ծխից դառնում են մուգ դարչնագույն: Այդ պատճառով բաց գունավորմամբ երկրաչափ միջատները նկատելի են դառնում թռչունների կողմից ու ոչնչանում: Սակայն որոշ առանձնյակներում մուտացիայի հետևանքով առաջանում են մուգ գունավորմամբ երկրաչափ միջատներ և կեչու մուգ դարչնագույնի վրա դառնում են անտեսանելի (նկ 1): Բնականաբար թռչունները այդ միջատներին չեն կտցահարում, նրանք պահպանվում են և սերնդեսերունդ դառնում գերիշխող, իսկ բաց գունավորմամբ երկրաչափ միջատներն անհետանում են: Շարժական ընտրությանը հաջորդում է կայունացնող ընտրությունը: Տվյալ դեպքում մուգ գունավորում ունեցող թիթեռների շարքում եթե առաջանում են նախքին հատկանիշով՝ սպիտակ գունավորումով թիթեռներ, ապա ծառերի մուգ ֆոնի վրա թռչունների համար դառնում են նկատողի և վերջիններս նրանց կտցահարում են:

Ընտրության այս ձևով են առաջացել առնետների և միջատների՝ թունաքիմիկատների նկատմամբ կայուն ձևերը:

Կայունացնող ընտրությունը բացահայտել է ռուս գիտնական Ի. Ի. Շնալհաուզենը: Այն գործում է միջավայրի անհամեմատ կայուն՝ չփոփոխվող պայմաններում և նպաստում է միջին նշանակության հատկանիշ ունեցող առանձնյակների պահպանմանը, իսկ եթե առաջանում են տվյալ պայմանների համար ոչ օգտակար հատկանիշներով առանձնյակներ, ապա դրանք չեն գոյատևում (նկ. 2):



Նկ. 2. Կայունացող ընտրություն:

Գիզուպտիվ ընտրությունը բնական ընտրության ձև է, որը նպաստում է ելակետային ձևերից երկու կամ մի քանի փոփոխականության ուղղությունների զարգացմանը: Արդյունքում պոպուլյացիայի ներսում առաջանում է միմյանցից տարբերվող ֆենոտիպական ձևեր:

Սեռական ընտրությունը ներտեսակային բնական ընտրության ձևերից է, որը հիմնված է մեկ սեռի (հաճախ արական) առանձնյակների մրցակցության վրա: Սեռական դիմորֆիզմի առաջացումը սեռական ընտրության արդյունք է:

Պատահական գործընթացները պոպուլյացիաներում:

Էվոլյուցիոն գործընթացներում շատ կարևոր են **գեների դրեյֆը** և **պոպուլյացիոն ալիքները**:

Գեների դրեյֆն էվոլյուցիոն գործոն է՝ փոքր պոպուլյացիաներում ալելների և գենոտիպերի հաճախականության պատահական, չուղղորդված փոփոխականություն, պայմանավորված պատահական գործոններով, որը պատճառ է դառնում առավել հարմարված ձևերի կամ փոքր հարմարվածություն ունեցող ձևերի պահպանման համար: Այդ ընթացքում տեղի է ունենում բնական ընտրություն: Գեների

դրեյֆի պատճառներից են պոպուլյացիոն ալիքները:

Եթե գեների դրեյֆը տանում է պոպուլյացիաներում հարմարվածության անկման, ապա պոպուլյացիան կարող է ոչնչանալ: Միաժամանակ երբեմն առաջանում են առանձնյակներ, որոնք նկատելիորեն տարբերվում են պոպուլյացիայի մյուս առանձնյակներից և ցուցաբերում են առավել հարմարվածություն: